Ազրբէջանցիների որոշ ձգձգումից յետոյ, ապր. 9-ին, բացուեց անդրկովկասեան 3 հանրապետութիւնների խորհրդաժողովը: Հայաստանի ներկայացուցիչներն էին Հ. Օհանջանեանը, Տ. Բէգդաղեանը, Ս. Մամիկոնեանը և Ս. Խաչատրեանը. Ազրբէջանինը՝ Հ. Աղայևը, Ֆ. Վեքիլովը, Ս. Կրիչինսկին. Վրաստանինը՝ Ե. Գեգեչկորին, Գ. Լորդկիպանիձէն և Գ. Մախարաձէն:

Օրակարգին անցնելուց առաջ, Հայաստանի և Վրաստանի պատուիրակութիւնները առաջարկեցին, առաջին հերթին, դնել Ղարաբաղի արիւնհեղութիւնների դադարեցման խնդիրը պնդելով, որ առանց դրան անկարելի է հանգիստ և արդիւնաւէտ աշխատանք կատարել: Ազրբէջանի պատուիրակութիւնը սկզբունքով չառարկեց, բայց պնդեց, որ պէտք է նկատողութեան առնուեն և Օրդուբաթի, Նախիջևանի, Վեդիի ու Ղազախի շրջանները: Եւ որովհետև ինքը լիազօրութիւն չունէր, առաջարկեց նիստը յետաձգել, մինչև որ Բաղուից ստացուեն համապատասխան հրահանգներ:

Ցաջորդ նիստում, ապր. 10-ին, կազմուեց խորհրդաժողովի նախագահութիւնը — Ս. Մամիկոնեան, Հ. Աղայև և Ե. Գեգեչկորի: Աղայևը Ազրբէջանի պատուիրակութեան կողմից կարդաց Բաղուի կառավարութեան հեռագիրը. «խորհրդաժողովի յարուցած հարցը կը քննուի վաղը, ապր. 10-ին, խորհրդարանի աւագների կողմից: Պատասխանը կը ստանաք վաղը երեկոյ»: Հայ պատուիրակները եռանդով բողոքեցին այդ ձգձգման դէմ: Որոշուեց նորից նիստը ընդհատել և սպասել Բաղուի պատասխանին:

Պատասխան չստացուեց և երրորդ նիստում, որը նոյնպէս յետաձգուեց: Չորրորդ նիստին, ապր. 11-ին, վերջապէս Աղայևը յայտնեց Ազրբէջանի կառավարութեան պատասխանը, որով նա «համաձայնութիւն էր յայտնում խորհրդաժողովի քննութեան ենթարկել ամբողջ Անդրկովկասի տարածութեան վրա ընդհարումներն ու արիւնհեղութիւնները դադարեցնելու միջոցների հարցը»: Որից յետոյ, երկար ու բարակ, քննուեց օրակարգի հարցը և ընդունուեց խորհրդաժողովի հետևեալ օրակարգը. 1) արիւնահեղ ընդհարումները դադարեցնելու հարց. 2) անդրկովկասեան պետութիւնների մնայուն մարմնի ստեղծում. 3) հողային հարցեր. 4) արտաքին քաղաքականութեան համաձայնեցումը. 5) կոնֆեդերացիայի հարց. 6) տնտեսական խնդիրներ:

Ապա խորհրդաժողովը քննութեան առաւ օրակարգի առաջին կէտը, որի առթիւ սուր վիճաբանութիւններ եղան հայերի և ազրբէջանցիների միջև: Վերջիններս պահանջում էին, որ տեղի ունեցող ընդհարումները նկատուեն իբրև «պատերազմ հայերի և մահմեդականների միջև»: Ի վերջոյ ընդունուեց հետևեալ բանաձևը, որ Աղայևի, Մամիկոնեանի և Գեգեչկորիի ստորագրութեամբ անմիջապէս հեռագրուեց Հայաստանի և Ազրբէջանի կառավարութիւններին. — «Ազրբէջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետութիւնների խորհրդաժողովը իր աշխատանքներին ձեռնարկելով՝ որոշում է 1) անմիջապէս դադարեցնել բոլոր այն արիւնահեղ ընդհարումները, որոնք այժմ տեղի են ունենում Ղազախում, Նախիջևանում, Օրդու-